

Բ Ա Ն Ա Ս Է Ր

ԼԱՆՈՒՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

Թ ՏՄՐԻ 1907	Տարեկան՝ 15 ֆր. = 6 որլ. = 3 դոլար	ՊՐԱԿ Դ N° 4
----------------	---------------------------------------	----------------

ԼԵՏԱՔՔԵԲԱԿԱՆ

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԵԵՆ ՍԸ

Անիէն 2 ժամի շափ հետաւ Հաջի Վէլի անունով գիւղ մը կայ, որուն բնակիչն ամբողջութեամբ յայն է

Դիւղին մէջ բնասանիւր մը մասնաւոր գուրգուրանքով կը պահէ հայկական խաչքար մը, որ դուրկ է արձանագրութենէ, եւ սակայն ուխտատեղի դարձած է թէ՛ յոյն եւ թէ՛ չրջակայ հայ գիւղացիներու:

Այս խաչքարէն դուրս շատ հետաքրքրական փոքր քար մը կայ գիւղին մէջ, վրան խիստ փոքրատառ երկաթագիր արձանագրութիւնով: Մարը վեցանկիւն է, եւ մէկ երեսին վրայ գրուած է.

« Սուրբ Կողմ(ա) եւ Դամիանոս (կոտւած)

Սուրբ Սարգիս »

Իսկ ասոր յաջորդող տակի երեսին վրայ կայ.

« Հայր սուրբ Որդի սուրբ Հոգի սուրբ

Ոս Բա Դարբիւ, եւ Միքայէլ Ռաֆայէլ

Սաղաթիւ, ազաչեմ բարեխաւսեցէք առ Տր

Սուրբ Սիոնն Սուրբ իման տերունական Սուրբ

Յարութիւն Սուրբ Մարիամ Տր Յովհաննէս Մըկըրաթի

Ճրագ աշխարհի սուրբ կաթաղիկէ առաքելական եկեղեցի

արք Քապուռնի եւ խաչակիր առաքելոցն որ զիխաւոր

քն Պետրոս եւ Անդրէաս Յա(կ)որոս եւ Յովնէս փիղիոյ

սս եւ Բորթողմէոս Թովմաս Մաթէոս Յակոբոս Թա

դէտս Սխմոն Մարկոս Ղուկաս | Պաւղոս Սուրբ Ստեփանոս
նոս Սուրբ Դանիէլ երանելիք Անանիանք Սուրբ
Թեառօրոս Սուրբ Դեոբորոս

Սուրբ Կիւրիակոս

[Գ]րիգոր ամենայն առաքելք մարգարէք եւ մաքաիւր
սք բարեխառսեցէք վասն հոյգոց մերոց (կոչուած) ու

Այս երեսին վրայ մասնաւոր շրջանակի մը մէջ ալ գրուած է հետեւեալը

« Ան Արեւոյ
զում Տն Զա
բուղովնի թո
ւն եւ աշակի
րո գրեցի զա
յս ութիմոյ
նոսրովու ա
րքայի որ ոք ք
աբոյսցէ զիս եւ
զՂուկաս զԲա
սիղէս եւ զՍըմ
պատ զեղբար
ս իմ եւ զաշակ
երես իմ յաղա
ւթս յիշեցէ(ք) »

Ի՞նչ կը նշանակեն այս վերի տողերը, ի՞նչ բանի կը ծառայէր
այս քարը, Պատառխանը շատ դիւրին է — « Բանասէր » ի Կատորին
մէջ (եր. 45—51) ըսած էի, թէ հին ժամանակ շէնքերու տակ կը թա-
ղէին՝ իբրեւ պահպանակ՝ զանազան տեսակ քարեր, գրուած կամ նկար-
ուած, նոյն շէնքին պահպանութեան եւ տեւականութեան համար։ Արդ՝
այս քարն ալ մի եւ նոյն նպատակի համար գործածուած քար մըն է, հւ
վերի «ութիմոյ» բառով պէտք ենք հասկընալ՝ պահպանակ կամ բժժանք։

Ան այժմ ժամանակ չուներմ քննելու « ութիմոյ » բառն ու « խոս-
րովու արքայի » ո՛վ ըլլալը, թերեւս կտրելի ըլլայ կարդալ նաեւ
« զայսու թեմոյ խոսրովու » քանի որ բառերն իրարմէ զատուած չեն
բնագրին մէջ, ի՞նչ որ ալ ըլլայ, այս հետաքրքրական արձանագրու-
թիւնն հրապարակ հանելով կը բաւականանամ այսօր։

Կ. Յ. Բ.